

*Այս դասի (դասի տեքստ + մոտիվացնող ներածական տեսանյութ + բառարան + ինքնաստուգիչ հարցեր + առաջադրանք) յուրացման համար հարկավոր է մինչև **360 րոպե/6 ժամ**:*

ԴԱՍ 2

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ

ՍՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(կարող եք գտնել հեռաուսուցման փաթեթի կրիչում)

Այս դասի ընթացքում Դուք կձանոթանաք՝

- մտածողության կանոնավորությունն ապահովող հիմնարար օրենքներին,
- **ապացուցման** և **հերքման** եղանակներին ու կանոններին,

կսովորեք նկատել՝

- մտքի շարադրման, **ապացուցման** ու **հերքման** ընթացքում հանդիպող տրամաբանական սխալները,
- շտկել դրանք և խուսափել այդպիսի սխալներից:

• ՓԱՏՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀՌԵՏՈՐԻԿԱ • ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Ցուցումներ



Մինչև 15 րոպե

Ուշադրությամբ կարդացեք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցեք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:



Մինչև 120 րոպե



2.1. ԿԱՆՈՆԱՎՈՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ

Մտավոր հաղորդակցման, ելույթի, բանավեճի արդյունավետությունը պայմանավորող գործոնների շարքում պետք է առանձնացնել իրազեկությունը տվյալ խնդրում, **Էրուդիցիան** (լատ. erudition - կրթվածություն, գիտակություն, խորը և բազմակողմանի գիտելիքներով օժտվածություն), խոսքի մշակույթը, մասնագիտական պատրաստվածությունն ու գիտելիքները, հոգեբանական թրծվածությունը, փորձը, Էթիկետը: Սակայն ամենակարևոր գործոնը, թերևս, **կանոնավոր մտածողությունն է:** Առանց ճիշտ, կուռ և հետևողական մտածողության անհնար է պատկերացնել ինչպես մասնագիտական պատրաստվածությունն ու գիտելիքները, Էրուդիցիան և փորձառությունը, այնպես էլ համոզիչ, տպավորիչ խոսքն ու ազդեցիկ ելույթը:

Ի՞նչ է անհրաժեշտ ճիշտ մտածողության համար: Տրամաբանական գիտելիքի այբուբենը հանդիսացող **ավանդական-ձևական տրամաբանությունը** սովորեցնում է, որ մտածողության կանոնավորությունը հիմնված է չորս «ոսկե» կանոնների վրա: Դրանք են՝ **նույնության, հակասության, երրորդի բացառման և բավարար հիմունքի օրենքները:**

Նույնության օրենքը պնդում է, որ կշռադատությունների տվյալ համակարգում յուրաքանչյուր դրույթ կամ արտահայտություն պետք է կիրառվի ստույգ և որոշակի իմաստով: Չի կարելի տվյալ համատեքստում որևէ արտահայտություն կիրառել մեկից ավելի իմաստներով: Այս օրենքն ապահովում է մտածողության և խոսքի **որոշակիությունը:**

Հակասության օրենքը տարածվում է **հակա-**

Փորձեք ձևակերպել նույնության օրենքի պահանջի խախտման օրինակ:

Փորձեք ձևակերպել

դիր (հակասող և հակադեմ) դատողությունների վրա և պնդում, որ երկու այդպիսի դատողություններ միաժամանակ ճշմարիտ լինել չեն կարող (սակայն միաժամանակ սխալ կարող են լինել): Այս օրենքն ապահովում է մտածողության և խոսքի **անհակասականությունը**:

Երրորդի բացառման օրենքը տարածվում է **հակասող դատողությունների** վրա և պնդում, որ երկու այդպիսի դատողություններ չեն կարող միաժամանակ ընդունել ճշմարտության միևնույն արժեքը. դրանցից մեկն անխուսափելիորեն ճշմարիտ է, մյուսն՝ անհրաժեշտաբար սխալ: Այս օրենքն ապահովում է մտածողության և խոսքի **հետևողականությունը**:

Բավարար հիմունքի օրենքը պնդում է, որ կշռադատությունների ընթացքում կիրառվող ցանկացած դրույթ պետք է լինի բավարար չափով հիմնավորված, անհրաժեշտորեն բխի ճշմարիտ նախադրյալներից: Այս օրենքն ապահովում է մտածողության և խոսքի **հիմնավորվածությունը**:

Ահավասիկ **նույնության օրենքի** պահանջի երկուստեք խախտման մի դրվագ.

Չինվորը դիմում է հրամանատարին.

- Ասացե՛ք խնդրեմ, հրամանատա՛ր, կարելի՞ է արդյոք պատժել մարդուն այն բանի համար, որ նա երբեք չի արել:

- Իհարկե՝ ո՛չ, - ասում է հրամանատարը:

-Այդ դեպքում խնդրում եմ ինձ չպատժել, որովհետև ես չեմ կատարել Ձեր երեկվա հրամանները:

Տվյալ օրինակում **նույնության օրենքը** խախտել են թե՛ զինվորը և թե՛ հրամանատարը: **Չինվորը** դա արել է գիտակցված, հրամանատարին շփոթեցնելու նպատակով (սովետություն): Հրամանատարին ուղղված հարցի համատեքստում «արարք» հաս-

ակասության օրենքի պահանջի խախտման օրինակ:

Էջ: | 33



Փորձեք ձևակերպել երրորդի բացառման օրենքի պահանջի խախտման օրինակ:

Փորձեք ձևակերպել բավարար հիմունքի օրենքի պահանջի խախտման օրինակ:



Վերհիշեք կամ **1-ին դասից** վերընթերցեք, թե ինչ է սովետությունը:



կացությունը նախ կիրառվել է, ըստ էության, *արգելված գործողության* իմաստով, իսկ հաջորդիվ՝ մեկնաբանվել որպես *պարտականություն*: Հրամանատարն էլ որոշակիության սկզբունքը խախտել է, այն անտեսել անզգուշության, գուցե նաև տրամաբանական ցածր կուլտուրայի հետևանքով:

Որոշակիության սկզբունքի խախտումները գանազան բարդություններ են ստեղծում ու կամայական մեկնաբանությունների տեղիք տալիս իրավական-նորմատիվ դաշտում:

Մեկ օրինակ ևս վարչաիրավական հարաբերությունների ոլորտից:

2013-2014թթ. պատկան մարմիններում հաճախակիացել էին վարորդների բողոքները երթևեկելի մասից դեպի մայթերի հատված կառուցված «գրպանիկ»-խորացումներում մեքենաները շեղակի կայանելու համար իրենց վարչական պատասխանատվության ենթարկելու որոշումների կապակցությամբ: Պետավտոտեսչության ղեկավարությունն այդ որոշումները հիմնավորում էր ՀՀ կառավարության թիվ 955-Ն որոշման 80-րդ կետով, ըստ որի «Տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին գուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի (երթևեկելի մասի տեղային լայնացում), որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր»: Բողոքի պատճառ հանդիսացած դեպքերում պետավտոտեսչությունը «երթևեկելի մասի տեղային լայնացում» հասկացության շրջանակներում էր դիտարկել նաև երթևեկելի մասից դեպի մայթ խորացող «գրպանիկները»: Վարչական պատասխանատվության էին ենթարկվել նաև այն վարորդները, ում մեքենաները, կայանված լինելով «գրպանիկներում», իրականում դուրս էին գտնվում երթևեկելի մասից և որևէ խոչընդոտ չէին ստեղծել երթևեկության համար:



կուրթունն ու անորոշությունը կամայական մեկնաբանությունների տեղիք էր տվել:

Այսպես: Եթե մայթերի հաշվին կատարված լայնացումները այնպիսին են, որ ավտոմեքենան կայանելիս որոշ մասով մնում է երթևեկելի հատվածում, ապա այդ տարածքն, իրոք պետք է սահմանել որպես երթևեկելի մասի տեղային լայնացում, այսինքն՝ երթևեկելի մասի հատված: Այդպիսի տեղերում շեղակի (կամ երթևեկելի մասին ուղղահայաց) կայանելու համար, իրոք, տրամաբանական է կայանման այդ ձևը թույլատրող գծանշումների անհրաժեշտությունը: Սակայն, երբ երթևեկելի մասից դեպի մայթ խորացող «գրպանիկի» չափերն այնպիսին են, որ ավտոմեքենան ամբողջությամբ դուրս է մնում երթևեկելի մասից և որևէ կերպ չի խոչընդոտում երթևեկությանը, ընդ որում գրպանիկի լայնությունն էլ այնպիսին է, որ մեծ ցանկության դեպքում անգամ հնարավոր չէ մեքենան երթևեկելի մասին զուգահեռ վիճակում տեղավորել այնտեղ, ապա այս պարագայում ճիշտ կլինի խոսել ավտոկայանատեղի և ոչ թե երթևեկելի մասի լայնացված հատվածի մասին: Այդպիսի «գրպանիկներում» մեծ ցանկության դեպքում անգամ երթևեկություն կազմակերպելն անհնար է:

ՀՀ Ազգային ժողովում կազմակերպված լուսնների ընթացքում հասարակական սեկտորի ներկայացուցչի կողմից այս խնդիրների բարձրաձայնումը պատշաճ պատասխան չգտավ իրավասու կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից: ՀՀ ոստիկանության և «Մեքյուրիթի դրիմ» կազմակերպության ներկայացուցիչների կողմից անպատասխան մնացին նաև ԱԺ գլխավոր մուտքի դիմաց, համապատասխան գծանշումների բացակայության պարագայում Բաղրամյան պողոտայի երթևեկությանը շեղակի կայանած մեքենաների վարորդներին վարչական պատասխանատվության չենթարկելու հիմքերի մասին հարցադրումները:

• ՓԱՏՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀՌԵՏՈՐԻԿԱ • ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՉԵՌԱՐԿ



Գրեք այս օրինակների ճիշտ տարբերակները:



Նույնության օրենքի խախտումներով են կառուցված նաև հետևյալ ձևակերպումները. *«սերք-մուսուլմանական կոնֆլիկտ», «Հանցագործությունները լինում են դիտավորյալ, առանձնապես վտանգավոր և խմբակային»:* Առաջին ձևակերպման մեջ հակամարտող կողմերից մեկը սահմանվում է ըստ ազգության, իսկ երկրորդ կողմն՝ ըստ կրոնական պատկանելության: Երկրորդ օրինակում հանցագործությունների տեսակներն առանձնացնելու (դասակարգելու) նպատակով մեկ որոշակի հատկության փոխարեն կիրառվել են երեքը՝ *ըստ մեղքի ձևի, ըստ վտանգավորության աստիճանի և ըստ կատարողների թվի:*

Հետևողականությունը, ինքն իրեն և արդեն հայտնի իրողություններին չհակասելու պահանջների պահպանումը ևս անհրաժեշտ գործոն է էլույթի համոզականության, արժանահավատության, էլույթ ունեցողի նկատմամբ վստահության ձևավորման առումներով: Հակառակ դեպքում խոսքը կորցնում է համոզականությունը, վտանգվում է հոետորի հեղինակությունը:

Հաջորդ տարում սպասվելիք իրադարձությունների թեմայով ասուլիս էին տալիս և կանխատեսումներ անում երկու քաղաքական գործիչներ: Երանցից մեկն իր տեսակետները շարադրում էր ոչ կատեգորիկ, հավանական ոճով՝ կիրառելով «հնարավոր է, որ...», «չի բացառվում...», «թերևս...», «կարծում եմ, որ...» արտահայտություններ: Երկրորդն իր գործընկերոջը հանդիմանեց այդ ոճի համար.

- Հանրությունն ու լրագրողները մեզնից սպասում են ավելի վստահ և միանշանակ գնահատականներ: Իսկ Դուք շարունակ խոսում եք խիստ թե-ական ու պայմանական դատողություններով: Լավ կլիներ մի անգամ էլ ասելիք՝ «համոզվա՛ծ եմ, որ», «վստա՛հ եմ, որ...»: Իսկ ես, օրինակ, կարծում եմ, որ հնարավոր է...

Դահլիճն արձագանքեց զուսպ ծիծաղով:
• ՓՍՍՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀՌԵՏՈՐԻԿԱ • ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՁԵՌԱՐԿ





Երրորդի բացառման օրենքի համաձայն՝ չի կարելի ելույթի ընթացքում միաժամանակ պնդել օրինակ, հետևյալ դատողությունների ճշմարտությունը.

- *Հասարակական հարաբերությունների յուրաքանչյուր ոլորտ կարգավորվում է իրավական որոշակի նորմերով: Կան հասարակական կյանքի ոլորտներ, որոնք իրավական նորմերով չեն կարգավորվում:*

- *Կան իրավական ակտեր, որոնք չունեն նորմատիվ բնույթ: Իրավական ակտերն ընդհանրապես ունեն նորմատիվ բնույթ:*

Տվյալ գույգ դատողություններից մեկն անխուսափելիորեն սխալ է: Իսկ ելույթը, որում տեղ է գտել սխալ դատողություն, չի կարող արդյունավետ լինել:

Մեկ օրինակ էլ դատարանին հասցեագրված դիմումից.

«Խնդրում եմ ձեր թույլտվությունը Պողոս Պետրոսյանից ինձ առանց իմ ներկայության ամուսնալուծելու համար, սակայն նախապես հայտնում եմ, որ ամուսնալուծվելու համաձայնություն չեմ տալիս»:



Բավարար հիմունքի օրենքի խախտումներով են կառուցված հետևյալ կշռադատությունները.

- *Եթե մարդը չափից ավելի ալկոհոլ է օգտագործում, կորցնում է ինքնատիրապետումը: Տվյալ մարդը կորցրել է ինքնատիրապետումը: Նշանակում է՝ նա չարաշահել է ալկոհոլը:*

- *Եթե ավտոմեքենան ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, ապա այն ենթակա է բռնագրավման: Տվյալ մեքենան բռնագրավվել է: Նշանակում է՝ այն ձեռք էր բերվել հանցավոր ճանապարհով:*



Երկու դեպքերում էլ բավարար հիմքեր չկան տվյալ եզրակացություններն անելու համար, քանի որ այդ հետևանքները կարող էին տեղի ունենալ նաև այլ գործոնների ու հիմքերի արդյունքում: Ընդհանրապես, սխալ է տրամաբանական հետևանքի հաստատումից միանշանակ եզրակացություն կատարել տրամաբանական հիմքի հաստատման վերաբերյալ:

2.2. ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԵՐՔՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Փաստարկման գործընթացի տրամաբանական հենքը կազմում են **ապացուցումն** ու **հերքումը**:

Ապացուցել՝ նշանակում է ցույց տալ տվյալ դրույթի ճշմարտացիությունը, այսինքն՝ համապատասխանությունն իրականությանը:

Այն դատողությունները, որոնցից բխեցվում է ապացուցվող դրույթի ճշմարտացիությունը, կոչվում են **ապացուցման հիմքեր** կամ փաստարկներ: Ապացուցումը ձևի տեսակետից **անհրաժեշտ մտահանգում** է կամ **անհրաժեշտ մտահանգումների շղթա՝** կշռադատություն:

Հավանական (կամ ճշմարտանման) մտահանգումները չի կարելի ներկայացնել որպես ապացույցներ: Դրանք կիրառելի են դրույթի հիմնավորման, վարկածի առաջադրման նպատակով: Այս դեպքում էլ, սակայն, **անհրաժեշտ է խուսափել ճշմարտանման մտահանգումների ընթացքում առավել հաճախ հանդիպող այնպիսի սխալներից, ինչպիսիք են.**

- *հապճեպ ընդհանրացումները,*
- *կարծիքին հակասող դեպքերի անտեսումը,*
- *ոչ էական նմանությունների հիման վրա համանմանության կառուցումը,*
- *«սրանից հետո՝ նշանակում է սրա*

Օգտագործելով նաև անցած դասից յուրացրած նյութը՝ նշեք փաստարկման և ապացուցման տարբերությունները:

պատճառով» մտածելակերպը:

Հապճեպ կամ շուտափույթ ընդհանրացման սխալը կատարվում է այն դեպքում, երբ մտքի «ծուլության», ժամանակի սղության կամ այլ պատճառներով խիստ սահմանափակ թվով դեպքերի դիտարկման արդյունքում ստացված եզրակացությունը շտապում են տարածել ամբողջ դասի նկատմամբ:

Այն փաստը, որ Մոսկվայում կատարված և արդեն բացահայտված մի քանի հանցագործություններ կատարվել են «կովկասյան ազգության ներկայացուցիչների կողմից», դեռևս չի նշանակում, որ Մոսկվայում կատարվող բոլոր հանցագործությունների հեղինակները կովկասցիներ են, առավել ևս՝ որ բոլոր կովկասցիները հանցագործներ են: Կամա թե ականա երբեմն իրականացվող նման «քարոզչական» ակցիաները կառուցվում են հապճեպ ընդհանրացման և կարծիքին հակասող դեպքերի անտեսման ճանապարհով:

Ահա *կարծիքին հակասող դեպքերի անտեսմամբ և «սրանից հետո՝ նշանակում է սրա պատճառով»* մտածելակերպի հիման վրա կառուցված կշռադատության մի օրինակ:

Սննդի մեջ գազարի գործածությունը կապված է մի շարք հիվանդությունների և դժբախտությունների հետ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրոնիկական հիվանդություններով տառապող մարդիկ հաճախակի են կերել գազար: Քաղցկեղից մահացած բոլոր մարդկանց 99,9%-ը կենդանության օրոք կերել է գազար: Ավտո և ավիաաղետների ենթարկված մարդկանց 99,7%-ը ողբերգությանը նախորդած երկու շաբաթվա ընթացքում սննդի մեջ օգտագործել է գազար: Բոլոր անչափահաս հանցագործների 93%-ը սերել է այն ընտանիքներից, որտեղ գազարը մշտապես գործածվել է որպես սննդամթերք:





Տվյալ դեպքում բացակայում է հապճեպ ընդհանրացումը, սակայն չեն դիտարկվում այն դեպքերը, երբ սննդակարգում գազար օգտագործողները հաջողություններ են ունեցել կյանքում. դարձել օլիմպիական չեմպիոն, կամ էլ հաջողակ գործարար ու երջանիկ ամուսին: Թույլ է տրվել նաև երկրորդ սխալը՝ «*սրանից հետո՝ նշանակում է սրա պատճառով*»: Պատճառը, որպես կանոն, նախորդում է հետևանքին: Սակայն տարածաժամանակային հաջորդականությունը դեռևս բավարար չէ երևույթների միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ պնդում կատարելու համար: Դրա համար երևույթների միջև անհրաժեշտ է նաև ծագումնաբանական կապ, ինչը տվյալ օրինակում բացակայում է:

Հիմնականում այդպիսի տրամաբանական սխալների վրա են կառուցված նաև տարատեսակ նախապաշարմունքներն ու սնահավատությունները:

Համանմանությունը (անայլոզիա) այնպիսի մտահանգում է, որտեղ երկու առարկաների միջև մի շարք հատկությունների նմանության հիման վրա ենթադրում են, որ դրանք կարող են նման լինել նաև այլ հատկություններով: Այս մեթոդը կարող է ընկած լինել տարատեսակ վարկածների ու աշխատանքային ենթադրությունների հիմքում, սակայն չունի ապացուցողական ուժ և իբրև ապացույց ներկայացնելը կարող է հանգեցնել էական սխալների:

Այն հանգամանքը, որ քննվող հանցագործությունը նման է արդեն բացահայտված մեկ այլ հանցագործության՝ կատարման եղանակով, կիրառված գործիքներով, զոհերի ընդհանուր բնութագծերով, դեռևս բավարար հիմք չի տալիս ապացուցված համարել, որ քննվող և արդեն բացահայտված հանցագործությունների հեղինակը նույն մարդն է: Դրա համար դեռևս անհրաժեշտ են լրացուցիչ փաստացի և անհերքելի ապացույցներ:

Պարզեք, թե մտահանգման որ ձևին է պատկանում համանմանությունը՝ անհրաժեշտ, թե՞ ճշմարտանման:

Երևան քաղաքի նույն համայնքի տարածքում գտնվող բանկերի երեք մասնաճյուղերի վրա 2008թ. կատարվել էին ավագակային հարձակումներ: Ոստիկանությանը հաջողվեց թարմ հետքերով հայտնաբերել վերջին հարձակումը կատարողին: Հաշվի առնելով, որ նախորդ ավագակային հարձակումները ևս կատարվել էին նույն տարածքում, նման էին իրականացման եղանակով ու մեթոդներով՝ առաջին երկու հանցագործությունները ևս մեղսագրվեցին տվյալ անձին: Դատարանը մեղադրական դատավճիռ կայացրեց: Սակայն մեկ տարի անց այլ հանցագործության մեջ կասկածվող անձի հարցաքննության ընթացքում ոստիկանությունը բացահայտեց, որ բանկերի մասնաճյուղերի վրա առաջին և երկրորդ հարձակումների իրական հեղինակը տվյալ գործով կասկածյալն է: Վերջինս խոստովանեց իր կողմից նախկինում իրականացված հանցագործությունները: ՀՀ վճռաբեկ դատարանը նոր երևան եկած հանգամանքների հիման վրա, քննության առնելով բանկերի երեք մասնաճյուղերի վրա հարձակումների համար դատապարտվածի բողոքը, բեկանեց դատական ակտը և ուղարկեց առաջին ատյանի դատարանին՝ նոր քննության: Առաջին ատյանի դատարանը բանկերի մասնաճյուղերի վրա հարձակումներ կատարելու երկու դրվագներով արդարացրեց դատապարտյալին և փոխեց նրա պատժաչափը:

Ոչ լրիվ ինդուկցիայի և համանմանության հիման վրա կառուցված անհաջող կշռադատությունների օրինակներ կարելի է գտնել Հովհ. Թումանյանի «Նետոյի քարաբաղնիսը» ստեղծագործության մեջ:

Նմանատիպ «թերություններով» է կառուցվում հեռուստատեսերում հաճախակի հնչող տարատեսակ լրտոների գովազդը: Այստեղ թվարկվում են միայն դրական դեպքերը: Բացակայում են տվյալներ վաճառքից ստացված գումարի, շահումների ֆոնդի իրական ծավալի, պարտված տասնյակ հազարավոր մարդկանց, շահող ու չշահող դեպքերի վիճակագրական հարաբերակցության մասին: Հարցն ունի ոչ միայն



տրամաբանական, այլև բարոյական և իրավական տեսանկյուններ:

Ապացուցման և **հերքման** տրամաբանական **կանոնավորությունն** ապահովելու համար անհրաժեշտ է բացառել նաև հաճախ հանդիպող այնպիսի սխալներ, ինչպիսիք են.

- Միայլ հիմքը
- Հիմքի կոահուումը (կամ չապացուցված փաստարկ)
- Կրկնաբանությունը (տավտալոգիա)
- Շրջապտույտը:

Միայլ հիմք կոչվող սխալի դեպքում դրույթի ապացուցման (կամ հերքման) նպատակով ներկայացվում է իրականությանը չհամապատասխանող փաստարկ (դատողություն):

Պետական կառավարման բոլոր մարմիններն ունեն օրենսդրական գործառույթներ: Մարզպետարանը պետական-տարածքային կառավարման մարմին է: Հետևաբար, մարզպետարանը ևս կարող է իրականացնել օրենսդրական գործառույթներ:

Իսկ երբ իրականությանը չհամապատասխանող փաստարկն առաջադրվում է այդ փաստի գիտակցումով և կանխամտածված ձևով, ապա գործ ենք ունենում *ստի* հետ:

Հիմքի կոահուում (կամ չապացուցված փաստարկ) սխալը կատարվում է այն դեպքում, երբ ապացուցման հիմքերը կամ հիմքերից մեկն ապացուցված չէ: Ուրանի որ հիմքի ճշմարտության հարցը դեռևս լուծված չէ, այն չի կարող ապացուցման համար փաստարկ ծառայել:

16-րդ դարում Լուվենյան համալսարանի պրո-




Ֆետր Ֆրուադմոնը հանդես եկավ Կոպեռնիկոսի դեմ: «Երկիրը չի կարող մոլորակ լինել,- ասում էր նա,- չի կարող պտտվել Արևի շուրջ, քանի որ Երկրի կենտրոնում գտնվում է դժոխքը, իսկ վերջինս պետք է որքան հնարավոր է հեռու լինի երկնքից, քանի որ այնտեղ գտնվում է դրախտը: Հետևաբար, Երկիրը գտնվում է երկնային տարածության կենտրոնում»:

Ուշադիր լինելու դեպքում կնկատեք, որ «դժոխքը գտնվում է Երկրի կենտրոնում», «դժոխքը գտնվում էրկնքից առավելագունս հեռու», «դրախտը գտնվում է երկնքում» և «Արևը գտնվում է երկնքում» դատողություններն իրենք հիմնավորման ու ապացուցման կարիք ունեն:

Կրկնաբանությունը (տավտայնգիս) այնպիսի սխալ է, երբ թեգիսի ապացուցման նպատակով վկայակոչվում է հենց նույն թեգիսը, անգամ եթե ձևակերպված է այլ բառերով: Օրինակ՝ «իմ պաշտպանյալն անմեղ է, քանի որ նա չի կարող մեղավոր լինել», «նրա ցուցմունքները չեն կարող կեղծ լինել, քանի որ դրանք ճշմարիտ են»:

Շրջապտույտ կամ արատավոր շրջան կոչվող սխալի դեպքում տվյալ դրույթն ապացուցելու համար ներկայացվում է որևէ փաստարկ, իսկ վերջինիս հիմնավորման նպատակով վկայակոչվում է սկզբնական դրույթը, ինչպես նկ.1-ում:

Նկար 1. Արատավոր շրջան



«Քաղաքացի X-ը կատարել է հանցագործություն: Այդ են վկայում քաղաքացի Y-ի ցուցմունքները: Իսկ ի՞նչ հիմքեր ունի Y-ն այդպիսի ցուցմունքներ տալու համար: - Նա այդպես է ասում, քանի որ X-ը կատարել



Է այդ հանցագործությունը»:

Փաստարկման գործընթացն արդյունավետ կազմակերպելու առումով կարևոր է իմանալ և կոնկրետ իրավիճակում ճիշտ կողմնորոշվել **ապացուցման և հերքման այս կամ այն եղանակի** ընտրության հարցում:

Թե՛ ապացուցումը և թե՛ հերքումը կարելի է իրականացնել *ուղղակի* և *անուղղակի* եղանակներով: Ուղղակի ապացուցման և հերքման դեպքերում ներկայացվում են այնպիսի փաստարկներ, որոնցից ամփջականորեն բխում է դրույթի ճշմարտացիությունը կամ սխալությունը:

Անուղղակի ապացուցման դեպքում ցույց է տրվում առաջադրված թեզիսին հակասող դրույթի սխալ լինելը և երրորդի բացառման օրենքի հիման վրա բխեցվում դրույթի ճշմարտացիությունը: Ապացուցման այս եղանակը կոչվում է *ապագոգիկ*: Մեկ այլ տարբերակում ժխտվում են թեզիսից բացի մյուս բոլոր հնարավոր ենթադրությունները քննարկվող հարցի վերաբերյալ, և թեզիսը հայտարարվում է ապացուցված որպես միակ հնարավոր ենթադրություն տվյալ հարցի վերաբերյալ: Այս եղանակն էլ կոչվում է *բաժանարար* անուղղակի ապացուցում:

19-20-րդ դարերի ոռու նշանավոր փաստաբան Միխայիլ Կազարինովը, ելույթ ունենալով իրենց վստահորդ Օլգա Շտեյնին փախուստի դրդելու համար մեղադրվող փաստաբաններին պաշտպանող ճառով, դիմում է անուղղակի հերքման ապագոգիկ եղանակին.

«Եթե ընդունենք, որ, ինչպես կարծում է մեղադրողը, փաստաբաններն իրենք են դրդել Օլգա Շտեյնին փախչել իր կամքին հակառակ, ապա բնականաբար, նա արցունքների և աղաչանքների փոխարեն պետք է պահանջեր նրանցից վերադարձնել հոնորարը: Անգամ առանց այդ պահանջի էլ փաստաբաններն իրենց

• ՓԱՍՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀՌԵՏՈՐԻԿԱ • ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՁԵՌԱՐԿ



Բերեք ուղղակի և անուղղակի ապացուցման օրինակներ:

Վերհիշեք, թե ինչ է թեզիսը և օրինակում գտեք ապացուցման թեզիսը:



պարտքը կհամարեին վերադարձնել եթե ոչ գործի համար ստացած ամբողջ հոնորարը, ապա գոնե դրա մի մասը: Մինչդեռ, մենք տեսնում ենք, որ Օլգա Շտեյնը, որն անդադար փողի փնտրտուքի մեջ է, ոչ միայն հեռանալիս, այլև հետագայում՝ գտնվելով Նյու-Յորքում և լինելով խիստ կարիքի մեջ, չի հայտնում այդ միանգամայն բնական պահանջի մասին... Պարզ չէ՞ արդյոք, որ փաստաբաննե՛րը չեն Օլգա Շտեյնի փախուստի նախաձեռնողները: Այլապես, նրանց ֆինանսական հարաբերությունների պատկերն այսօր միանգամայն այլ կերպ կդասավորվեր...» [Речи известных русских юристов, 1985, էջ 174]:

Հռետորական նկատառումներով (խոսքն առավել տպավորիչ ու համոզիչ դարձնելու համար) անուղղակի **ապացուցման** ու **հերքման** նպատակներով կիրառվում է նաև *reduction ad absurdum* (*հանգեցում անհեթեթության*) տարբերակը: Այս եղանակի դեպքում պայմանականորեն ընդունվում է քննարկվող դրույթի ճշմարտացիությունը և ցույց է տրվում ու մեկնաբանվում, թե ինչ անհեթեթ եզրակացություններ ու հետևանքներ են բխում դրանից: Այդ եզրակացությունների անհեթեթ լինելը վկայում է, որ սկզբնական ենթադրությունը սխալ է և անընդունելի:

Այս դասի ընթացքում Դուր ծանոթացաք՝

- կանոնավոր մտածողության հիմնարար սկզբունքներին,
- փաստարկման տրամաբանական հենքը հանդիսացող ապացուցման և հերքման կանոններին ու եղանակներին,

դիտարկեցիք՝

- այդ ընթացքում հաճախ հանդիպող սխալներն ու թերությունները: